

ՆՎԱԶԵՑՎԵԼ ԵՆ ՍՊԱՌՈՂՆԵՐԻՆ ՎԱՃԱՌՎՈՂ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՍԱԿԱԳՆԵՐԸ

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 23-ին կայացած նիստում քննարկվել են էլեկտրական էներգիայի սակագների սահմանման մասին հարցերը:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշմամբ **սոցիալապես անապահով ընտանիք համարվող սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագները նվազեցվել են 6.2 դրամ/կՎտժ-ով (ներառյալ ԱԱՀ-ն), իսկ մյուս սպառողներինը՝ 1,22 դրամ/կՎտժ-ով (ներառյալ ԱԱՀ-ն):**

Սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի վերանայված սակագներն են՝

1) **110 կՎ** լարմամբ սնվող սպառողների համար՝

ա. ցերեկային սակագին՝ **33.48 դրամ/կՎտժ (գործող 34.7 դրամ/կՎտժ-ի փոխարեն)**՝ ներառյալ ԱԱՀ-ն,

բ. գիշերային սակագին՝ **29.48 դրամ/կՎտժ (գործող 30.7 դրամ/կՎտժ-ի փոխարեն)**՝ ներառյալ ԱԱՀ-ն,

2) **35 կՎ** լարմամբ սնվող սպառողների համար՝

ա. ցերեկային սակագին՝ **35.98 դրամ/կՎտժ (գործող 37.2 դրամ/կՎտժ-ի փոխարեն)**՝ ներառյալ ԱԱՀ-ն,

բ. գիշերային սակագին՝ **31.98 դրամ/կՎտժ (գործող 33.2 դրամ/կՎտժ-ի փոխարեն)**՝ ներառյալ ԱԱՀ-ն.

3) **6 (10) կՎ** լարմամբ սնվող սպառողների համար՝

ա. ցերեկային սակագին՝ **41.98 դրամ/կՎտժ (գործող 43.2 դրամ/կՎտժ-ի փոխարեն)**՝ ներառյալ ԱԱՀ-ն,

բ. գիշերային սակագին՝ **31.98 դրամ/կՎտժ (գործող 33.2 դրամ/կՎտժ-ի փոխարեն)**՝ ներառյալ ԱԱՀ-ն,

4) **0,38 կՎ և ցածր** լարմամբ սնվող սպառողների (այդ թվում՝ բնակչության) համար, **բացառությամբ 5-րդ կետով սահմանված սպառողների՝**

ա. ցերեկային սակագին՝ **44.98 դրամ/կՎտժ (գործող 46.2 դրամ/կՎտժ-ի փոխարեն)**՝ ներառյալ ԱԱՀ-ն,

բ. գիշերային սակագին՝ **34.98 դրամ/կՎտժ (գործող 36.2 դրամ/կՎտժ-ի փոխարեն)**՝ ներառյալ ԱԱՀ-ն,

5) ՀՀ կառավարության 2016 թվականի նոյեմբերի 3-ի N°1122-Ն որոշման համաձայն սոցիալապես անապահով ընտանիք համարվող սպառողների համար՝

ա. ցերեկային սակագին՝ 40.0 դրամ/կՎտժ (գործող 46.2 դրամ/կՎտժ-ի փոխարեն)՝ ներառյալ ԱԱՀ-ն,

բ. գիշերային սակագին՝ 30.0 դրամ/կՎտժ (գործող 36.2 դրամ/կՎտժ-ի փոխարեն)՝ ներառյալ ԱԱՀ-ն:

Սահմանված սակագները ուժի մեջ կմտնեն 2017 թվականի փետրվարի 1-ից:

Մանրամասներին կարելի է ծանոթանալ www.psrc.am ինտերնետային կայքում: